

պիտոյիոնին մէջը դնել տուած եմ ուրիշ գրքերու հետ . զիք ձեզ ամեն գծրախտութենէ պահեն :

ԱՌԱՔԻՆԵՒ ԽԱՓՇԻԿ

Գերութեան մէջ ծնած աղքատ խափշիկի մը օրինակը կը ցուցնէ մեզի թէ ինչպէս Աստուծոյ սէրը և քրիստոնէական հպատակելու փափաքը կը բնայ երջանկացնել զմեզ նաև մեր ամենաթշուառ և աղքատ վիճակին մէջ :

Եւստաքէոս անունով խափշիկ մը որ 1763ին Ս . Դոմինիկոսի քաղաքը ծներ էր , Պ . Պըլէնի երեսն տիրոջ տունը , իր աղայութեան հասակէն ուղղափառ կրօնի և առաքինական գործոց սկզբունքներուն մեծ սէր ու եռանդ կ'երկցնէր վրան : Այս սկզբունքներով մեծնալով իր ծառայակից ընկերներէն աւելի սիրելի եղաւ իրեն առաջնորդացը . այնպէս որ այս դաղթականաց երկրին ¹ մէջ մեծ ձախորդութիւն ընկած ժամանակը՝ պատճառ եղաւ ինքը իր տիրոջը և ուրիշ շատերու կենաց փրկուածութեանը , զոր հիմա պիտի տեսնենք :

Երբոր պատրաստուեր էին սևերը ջնջելու բոլորովին իրենց մէջէն զճերմակները , այս Եւստաքէոս ըսածնիս ալ խորհրդի կանչելով՝ յայտնեցին անոր իրենց չար միտքը . և մտքերնէն չանցընելով անոր այն աստիճանի երկիւղածութիւնը՝ կարծեցին թէ մէկէն ան ալ հաղորդ և գործակից պիտի ըլլայ իրենց : Եւ յիշաւի , Եւստաքէոսի մտացը մէջ սպանութիւն և ազատութիւն մէկմէկէ շատ տարբեր բաներ կ'երևէին : Ընկերացը այլանդակ խմբին մէջ մտնելով , որոնք ջահերով ու թուրերով զինեալ էին , տեսաւ զգաղթականները որ մեռնելու մօտ հասած՝ իրենց հրդեհեալ տանը աւերակացը տակ կը դողային . սակայն ինքը առանց վախ

նալու հաստատուն կը կենար որոշմանը վրայ : Ոչ իրեն ընկերակցացը՝ սևերուն՝ ճերմակներուն դէմ ունեցած քէնն ու շատելութիւնը , ոչ հասարակաց օգուտը և ոչ սիրոյ կապը կրցան զինքը իր միտքի գրածէն պզտի կերպով մ'այլ սասանեցընել . միշտ դէպ իրեն նպատակը՝ կրօնից սիրոյն՝ կ'ուղղէր սիրտն աւաշուրները . հոն՝ ուր ոչ վրէժխնդրութիւն՝ այլ ուրիշ գործադրելի էական պարտքեր կան :

Ահա այս իրեն անընկճելի անձին նուիրմամբը՝ զոհերու մեծ բազմութիւն մը մահուան դռնէն դուրս թափեց : Մա նաւանդ իրեն տիրոջը վրայ շատ կը գուրգուրար և առանձին սիրով մը կը սիրէր զանիկայ , 'ի փոխարէն անոր իրեն վրայ քսան տարուընէ 'ի վեր ցուցած մարդասիրութեանը : Ուզի տակ կոխելով ամենայն արգելք և աչքն աւնելով մեծամեծ վտանգներ , ըրաւ չըրաւ վերջապէս ամերիկացի նաւու մը մէջ անոր կենալու առանձին տեղ մը ճարեց . և նոյն նաւը շաքարի պարկերով բեռնաւորեց , որով ոչ միայն իր տէրը մեռնելէն ազատեց՝ այլ նաև անոր պէտքն ալ առատութեամբ հոգաց , փոխանակ զի անիկայ երբեմն իրեն հայրենակցաց շատին կենաց պատճառ եղեր էր :

Բայց այս ուրախութիւնը երկար չտևեց : Նաւը ճամբայ ելլելով՝ անգղիացի ծովու հիներէ կը զարնուի ու կը բռնուի : Ուրեմն Պ . Պըլէն և իր բարեկամները զերութեան մէջ վստայեալ համար խափշիկներուն զազան ճանկերէն փախուստ տուին . այս ինչ յուսահատութիւն : Չէ . Եւստաքէոս այս երկրորդ վտանգէն ալ զիրենք ողջ առողջ կ'ազատէ : Մինչդեռ զաժան յաղթականներն անհոգութեամբ իրենք զիրենք անգամ մը կերուխումի տուած կը գինեհարէին , Եւստաքէոս իրեն բնիկ յաջողակութեամբն ու վարպետութեամբը զիրենք սեղանի առին զուարճայնելու ժամանակն՝ յանկարծ վրանին կը յարձըրի , և գերեկցաց օգնութեամբն որոնց առաջուց իմացուցեր էր միտքը , զամենն

1 Ս . Դոմինիկոսի խափշիկները 1792ին ապրտամբեցան Գաղղեացուցմէ , որով և այս ճոխ գաղթականաց երկիրը Գաղղոյ մեծ փնաբերաւ :

ալ շղթայի կը զարնէ, և նաւը յաղթա-
կան՝ ուռած թևերով Պաղդիմորի նա-
ւահանգիստը կը մտնէ:

Եւստաքէոս թէպէտ գերի՝ սակայն
արժանաւոր առաջին կարգի ազնուա-
կան քաղաքացի մը սեպուելու, բաւա-
կան յետգեր միայն վտանգալից օրերու
մէջ իր փայլուն առաքինութիւնը հան-
դիսապէս շողողեցընելու ամենուն ա-
չացն ու մտացը մէջ. բորբոքեալ և գործօն
սիրտը նաև հանդարտութեան ժամա-
նակն անգամ չդադրիր վառելէն ու գոր-
ծելէն: Ամեն ջանք թափեց և ամենայն
հնարք բանեցուց յագեցընելու այն լա-
փող եռանդը՝ որ կ'ուռէր կը մաշեցը-
նէր իր ներսի դին: Չանոնք որ գերու-
թենէ աղատեց՝ պէտք էր հիմա կերա-
կրել: Անոր համար բոլոր իր ժամանա-
կը, հոգը, աշխատութիւնը խեղճ գաղ-
թականին ամենօրեայ ապրուստը հայթ-
հայթելու կը ծախէր. և ասկէ աւելի
ինչ կրնար ընել: Ա՛լ կամաց կամաց կը
հեռանար աչքին դիմացէն անոր տա-
ռապանաց ցաւալիւր պատկերը ուսկից
մեծապէս կը նեղուէր: Ուստի որ անց-
նէր՝ կամ օգնութիւն, կամ բարիք և
կամ մխիթարութիւն մ'անհրաժեշտ
պիտի թողուր հոն:

Երբ այսպէս քիչ մը կարգ կանոն
սկսաւ մտնել գաղթականաց մէջ, Պ.
Պըլէն և Եւստաքէոս ուզեցին ետ դառ-
նալու և ուրիշ արսորեալներ նորէն հե-
տերնին բերելու: Բայց հազիւ թէ ու-
սուրնին ցամաք դրեր էին, նոր ահա-
ւոր գոյժ մ'առին: Քսան հազար ա-
պրատամբ քաղաքին մերձակայ բար-
ձրաւանդակացը վրայ բանակինին դրեր
պատրաստ կեցեր կը սպասէին: Պարապ
տեղը Պ. Պըլէն ընկերներովը Սպանիա
ցւոցմէ ղէնք և օգնութիւն կը խնդրէ.
խափշիկները մէկէն սոված դազանաց
նման խմբովին իրենց գառազղէն դուրս
կը յարձրկին. Պ. Պըլէն կծիկը կը դնէ
ու կը փախի. չարածճի խափշիկ գունդ
մը մինչև ծովեզերք ետևէն կը պնդի,
հոն ճարը հատնելով Պ. Պըլէն ինքզին-
քը ծով կը նետէ, ուր սպանիացի զօ-
րաց բանակ մը տեսնելով՝ կ'իմացընէ

անոր իրեն ո՛վ ըլլալը ու Աղատեցէք,
կ'աղաղակէ: Չինուորաց վազելը, զա-
նիկայ բարբարոսաց ձեռքէն յափշտա-
կելը ու իրենց բանակին մէջ ձգելը մէկ
կ'ըլլայ. որով ինքզինքը գտած՝ քիչ
մ'ոգի կ'առնու, և այս երկրորդ անգամ
մահուանէ կը պըծի, բայց ինչպիսի մա-
հուանէ:

Հապա իր սրտակից բարեկամը ար-
գեզը ինչ եղաւ: Խուռն ամբոխին մէջ
ղանիկայ աչքէն կորանցընելով և յետ
անօգուտ տեղը զինքը բնտուելու, ինք-
զինքը Աստուծոյ յանձնած՝ կը յանայ
գտնէ իրենց ունեցած հարստութիւնը
աւարէն խալըսելու: Շիտակ խափշիկ-
ներուն գլխաւորին կ'երթայ որ պառաւ-
կին մ'էր: Վրանը մտնելով՝ հիւանդ
անկողնոյն մէջ պառկած կը գտնէ զա-
նիկայ. բայց բանի մը տեղ չգնելով՝ կը
պատմէ անոր քիչ մ'առաջուան իր
գլխէն անցած դէպքը, և երգուընցընե-
լով՝ խօսք կ'առնու անկէ որ գէթ իր
քանի մը մեծագին սնտուկները կատա-
ղիներուն աղահ ձեռքէն փախցընէ: Կը
հաւանի պառաւը ու կ'առնու զանոնք
զգուշութեամբ մը անկողնոյն տակը կը
ծածկէ: Իսկ ինքը դուլըր կախած մէ-
կէն կոտորածի արիւնոտ գաշտը կը
դիմէ, ուր խառնիխուռն դիականց մէջ
աչուընները լեցուն իր տիրոջն ալ կը
բնտուէ, բայց բարբաղղաբար չգտնէր.
մտմտուքը կ'առնու զինքը, ասդին կ'իյ-
նայ անդին կ'իյնայ. ասոր անոր տեղե-
կութիւն կը հարցընէ և վերջապէս կ'ի-
մանայ որ ան ալ իրեն պէս փախեր է.
ուրախութեամբ նորէն պառաւին վրա-
նը կը դառնայ ետ առնելու անկէց մե-
ծաւ շնորհակալութե՞ Պ. Պըլէնին գան-
ձերը: և ամեն բան յաղորդութեամբ կար-
գի դնելէն ետքը՝ նորանց նաւ ելլելով՝
Ս. Նիկողայոսի նաւահանգիստը կը մըտ-
նէ, ուր Պ. Պըլէն սրտադողով իրեն կը
սպասէր: Հոն տեսնելու էր տիրոջ և
ծառային մէկմէկու վրայ ունեցած փո-
խադարձ սիրոյն արգասիքը:

Ա՛լ անկէ ետքը անվրդով խաղաղու-
թեամբ կեանքերնին կը սկսին անցընել:
Եւստաքէոս շատ անգամ ցաւօք սրտի

կը տեսնէր որ իր տէրը կը հեծէր ու կը դանգատէր աշուրներուն հետզհետէ տկարանալուն համար. վասն զի քանի որ տարիքը կ'առնուր ու կը ծերանար, այնչափ ալ աչաց տեսութիւնը զգալապէս կը կորսնցընէր: Ո՛հ, ինչպէս կը փափագէր Եւստաքէոս որ կտոր մը կար գալ զիանար, որով կարենար գոնէ երբեմն երբեմն լրագիրներ կակազելով՝ ծերուն երկայն և ձանձրալի տընութիւնները քիչ մը կարճեցընել ու զըւարթացընել զինքը: Ի՛նչ մեծ ցաւ իրեն՝ որ չէր առած այնպիսի օգտակար կրթութիւն մը, և ծերուն՝ որ անհոգ եղբր էր անոր պղտիկութեանը ժամանակ կարգալ սորվեցընելու: Բայց շուտով փարատեցաւ տրտմութիւնը: Եւստաքէոս զուխը փայտի ու քարի զարնելով՝ հասաւ այս փափագածին ալ: Գաղտուկ վարժապետ մը բռնեց, և աւելի իրեն տոկուն երկայնմտութեամբ քան թէ քաջուղիմութեամբ քիչ մ'աւտենուան մէջ սկսաւ կարգալ. և օր մը զիրքը ձեռքը՝ գրեթէ բոլորովին կուրցած ծերուն սենեակը մտաւ. և իրեն այս օրինակովը ցըցուց անոր թէ ինչպէս սէրը շատ անգամ նաև տգիտութեան կը յաղթէ:

Բայց փաստն որ շատ շուտով կորսընցուց զայն՝ որուն սիրոյն բոլոր կեանքը նուիրեր էր: Պ. Պըլէն ալ, ինչպէս որ մինչև այն ատենը զինքը սրտանց սիրեր էր և ամենևին ձեռքէ չէր թողեր՝ նոյնպէս և մանաւանդ թէ կրկնապատիկն ըրաւ նաև իր մեռնելէն ետքը: Հարուստ կտակ մ'ըրաւ անոր, որուն մէջ՝ բաց 'ի ուրիշ այլևայլ մեծագին նիւթերէն՝ 12000 Փր. գումար մ'այլ կար: Իսկ առաքինի Եւստաքէոսն այս ամեն հարստութիւնս ոչ 'ի մարդկանէ՝ այլ իբրև յԱստուծոյ 'ի մխիթարութիւն աղքատաց և յօգնութիւն ցաւագարաց իրեն եկած սեպելով առատութեամբ կը բաշխէր անոնց, որով քիչ մը ժամանակէն սպառեցաւ բոլոր հարստութիւնը. վասն զի հազար ու մէկ աղքատ ունէր: Ամեն օր քսակը ձեռքը՝ շապիկ, կտաւ, զգեստ, կահ կարասիք, մէկ խօս.

քով ինչ որ կ'ուզէին իրմէ, զամենն ալ առատաբար կը լեցընէր ու գոհ սրտով տեղերնին կը ճամբէր: Մէյմ'ալ զինուորներ կը տեսնէ՝ որոնց ուժիկը ու շացուցեր ու զեռ չէր հատուցեր տէրութիւնը. Եւստաքէոս տէրութիւն պարտքն ալ կը վճարէ: Առանց հացի ընտանիքներ կը տեսնէ, Եւստաքէոս անոնց ալ կը հասնի ու զամենն ալ կը լիացընէ: Վերջապէս ամեն ունեցածն ու չունեցածը կու տայ, և իրեն քով իր բարի գործոց անուշ յիշատակէն գատ ուրիշ բան չիմնար: Բայց բան մը չէ. ոչ պիտի ցաւի և ոչ ալ պիտի զղջայ ըրածին վըրայ, այլ մանաւանդ թէ շնորհակալ պիտի ըլլայ Աստուծոյ, որ իր վիճակէն մեծապէս գոհ է:

Շատ տարիներէ ետքը Եւստաքէոս Բարիզ կ'երթայ կը բնակի. և հոն մեծ պանդոկի մը տեսչութեան պաշտօն կ'առնու, և ստէպ ստէպ ալ ազնուական մարդիկներէ մեծածախ խնջոյից կը հրաւիրուի: Նոյն իսկ այն վիճակին մէջ անգամ չմոռնար իր սովորական ընելիքը. և ինչպէս որ առաջ միշտ ըրեր էր՝ այնպէս ալ հիմա զնոյնը կ'ընէր, անդադար մէկուն մէկալին սնապա կաս բարիք գործելով: Օր չէր անցնէր որ այս դրած առաջադրութենէն կարենար ետ կենալու: Վայրկեանը մէյմը առիթ կը գտնէր բանեցընելու իր անհատնում առատաձեռնութիւնը՝ որուն գործադրութիւնը ամենաքաղցր բան մ'էր իրեն համար: Երբեմն աղքատ տղաքներ կը գտնէր ու իր ծախքովը զանոնք կը սնուցանէր. երբեմն պարապորդ երիտասարդներ արուեստի մէջ կը գնէր նոյնպէս իր ծախքովը: Երբեմն ալ նաև աշխատաւորաց համար գործիներ կը գնէր՝ որով կարենան ալ բուստնին ճարել. իր տիրոջը ազգականները մեծ մեծ գումարներ փոխ կ'առնուին իրմէ և չէին դարձըներ. ամենևին ձայն չէր հաներ և ոչ իսկ կը մըտածէր բռնի հատուցանել տալու:

Ահաւասիկ Եւստաքէոս ըսածնիս. ահա զմարդկութիւնը պատուող մէկ հատիկ մարդը: Երբ զինքը կը գովէին

ու կը մեծարէին, կը փախչէր անոնցմէ
իր սովորական պարզութեամբը ու կ'ը-
սէր. « Մարդկանց համար չէ ըրածս,
այլ միայն անոր համար որ երկիրն է »:

ՄԱՒՐԻՏԱՆԻՍ և ՄԱՒՐԻՏԱՆԱՅԻՔ

(Բազմամէկ էջ 219-)

Այս Ափրիկէի աշխարհը Արաբա-
ցոցմէ Մադրըպ կոչուած է հին ժա-
մանակէ՛ի վեր, որ ըսել է արևմուտք.
վասն զի հիւսիսային Ափրիկիոյ արև-
մտակողմը կ'իյնայ. և կը բովանդակէ
իր մէջը Բարբարոսաց աշխարհը, Ալ-
ձէրին, Մարօքի և կամ Բուս Մադրը-
պի տէրութիւնը, և մասամբ Սահարա
կոչուած լայնածաւալ անապատը:

Բնական աշխարհագրութիւնը այս
մասին մէջ երկու մեծամեծ երևոյթներ
կը բանայ. աշխարհիս մեծագոյն անա-
պատը և լեռանց գօտիներուն ընդար-
ձակագոյններէն մէկը. Սահարան և
Ատլասը, որոնք նաև երկու կը բաժնեն
բոլոր երկիրը, ՚ի Պէրպէրիստան և ՚ի
Սահարա. առաջինը Ատլաս լեռան հիւ-
սիսային կողմը կ'իյնայ, և կ'ըսուի նաև
Ատլասի երկիր:

Ատլաս լեռինք երկու գօտի կը բաժ-
նուին. անապատին մօտինը կ'անուանի
Մեճ Ատլաս, Միջերկրական ծովուն
նայողը Փոքր Ատլաս, երկուքն ալ ա-
րևմուտքէն դէպ ՚ի արևելք ձգուած,
բայց ուրիշ շատ միջանկեալ լեռներ
հիւսիսէն դէպ ՚ի հարաւ ուղղուած՝ կը
միացնեն այս երկու գօտիները, ու ձո-
րեր և սարահարթ տեղեր կը ձևացը-
նեն¹:

Ատլասին գօտիներէն ոմանք դիւրան-
ցանելի են իրենց նեղութեանը և բազ-
մաթիւ կիրճերուն պատճառաւ, որոնք
դրունք կ'ըսուին Արաբացոցմէ: Մա-

¹ Պաղովստոս աշխարհագրին յիշած Մեճ և Փոքր
Ատլաս աւ լեռանց կողմնական ձիւղերն են, որոնք
բուն գօտիէն անջատած՝ հրուանդանի ձևով կ'եր-
կրնան ծովուն վրայ:

րօքի արևելեան դին լայնութեան 32
աստիճանին տակ՝ են Ատլասի բարձրա-
գոյն գագաթները իրենց մշանջեանաւոր
սպիտակութքը. ծովու երեսէն 12,000
ոտք բարձրութիւն ունին ըստ Հում-
պոլդի: Ալճէրիի մէջ լեռները մայիսի
կ'ազատին ձիւնէ, սեպտեմբեր չմտած
նորէն կը ճերմկնան:

Լեռանց քարերուն վրայ դեռ պէտք
եղած քննութիւնները եղած չեն. ըստ
Տէֆոնդէնի Գաղղիացոյ. Դունուզի,
Ալճէրիի և Մարօքի մէջ, ուր ինքն պտը-
տած է, Ատլասի գօտին կրաքարու է,
և նոյն լեռանց վրայ՝ ծովէն շատ հեռու
գտեր է խեցիներ և ծովային մարմին-
ներ: Նումիդիոյ չքնաղ մարմարիոննե-
րը՝ զորոնք Հռովմայեցոց պերճութիւ-
նը սպառեց, մաս մը համակ դեղնա-
գոյն էին, մաս մ'ալ խառն գոյներով.
Հռովմայեցոցմէ առաջ ալ կարքեգո-
նացիք զործածած են զանոնք միւսիոն
քարայատակներ շինելու համար: Բայց
պղնձի, երկաթի, կապարի և ուրիշ մե-
տաղաց հանքերը Մարօքի և Ալճէրիի
մէջ՝ ապառաժներուն խաւ խաւ և կամ
որձաքարէ ըլլալը կը յայտնեն: Այն
բլուրները որոնցմով Ատլաս կ'երթայ
կը լրմըննայ Պարքաւ անապատին մէջ
սպիտակ կրաքարի կոյտեր են:

Ափրիկիոյ այս մասին արգաւանդա-
հող ըլլալը հին աշխարհագիրներէ ալ
գովուած է: Պլինիոս կը զարմանայ ա-
նոր թուղերուն, ձիթենիներուն, ցորե-
նին և աղնիւ փայտերուն վրայ. կ'ըսէ
ալ որ զինիին տեսակ մը դառնութիւ-
նը անցընելու համար բուռ կը խառ-
նեն եղեր մէջը. որթերուն մէջ անանկ
հաստեր կան, կ'ըսէ Ստրաբոն, զորոնք
երկու հողի հազիւ կրնան գրկել, և ող-
կոյններն ոտնաչափ երկայն են: Բա-
ղաքականութեան ոչ վատթար տնտե-
սութիւնը, և ոչ կրթութեան պակա-
սութիւնը կրցեր են բնութեան այս գե-
ղեցիկ տուրքերը բոլորովին անհետա-
ցընել. մինչև հիմայ Բարբարոսաց երկ-
րէն մեծ քանակով ցորեն դուրս կը
հանեն, ձիթապտուղը Գաղղիոյ Բրո-
վանս դաւառինէն աղնիւ է, և եօթը տե-